

ՄԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՐՏԵԶ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԱՄՏՈՆ ողորմածությամբ ընթերցողի սեղանին է դրվել պատմաբան Ռաֆայել Թաղևադյանի նոր ու բարձրարժեք ուսումնասիրությունը՝ «ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ – 1914. ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ» գործի երկրորդ հրատարակությունը: Այն տպագրվել է 2007-ին Երևանում՝ «Տիգրան Մեծ» հրատարակչությունում, հեղինակի միջոցներով:

Քարտեզը տպագրված է բարձրորակ թղթի վրա՝ 4 առանձին թերթերով: Ամբողջական քարտեզն ընդգրկում է 17 թեմատիկ քարտեզներ և ՀՀ ու ԼՂՀ վարչական քարտեզն ազատագրված տարածքներով, ինչպես նաև հատուկ քարտեզ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՍՄԱՐՏՆԵՐ՝ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՍԱԳՐՈՒՄԸ:

«ՀԱՐՄԱՆԻՔ ԼԵՌՆԵՐՈՒՄ» ՕՊԵՐԱՑԻԱՆ – 1992 թ. մայիսի 8 -16:

Քարտեզից բացի կա նաև գրքույկ՝ քարտեզում ներկայացված շուրջ 9000 բնակավայրերի այբբենական անվանացանկերով: Գրքույկն սկսվում է հեղինակի «Երկու խոսք»-ով և ավարտվում Արևմտյան Հայաստանի, ներառյալ Հայկական ԿԻԼԻԿԻԱՆ, մի շարք բնակավայրերի հին ու նոր (աղավաղված կամ վերափոխված) անունների համառոտ ցանկով:

Քարտեզն ունի նկարագարող շքեղ կազմ, որի առաջին էջում պատկերված են Արտուս լեռը, Վանա լիճը, Աղթամար կղզին և Ս. Խաչ եկեղեցին ու դրվագներ նրա հարթաքանդակներից, Վանի միջնաբերդի պարիսպները, երկրորդ էջին՝ Կարսի միջնաբերդը, Անիի Մայր Տաճարը, Խաչքար Մշո դաշտից, Խոշաբի բերդը, Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին:

Հեղինակի խոսքից տեղեկանում ենք հետևյալը. «ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ – 1914» քարտեզի կազմման համար օգտագործվել է հայերեն և օտարալեզու մեծ ծավալի գիտական ու գիտահանրամատչելի գրականության ավելի քան 250 անուն: Օգտագործվել են նաև զգալի քանակությամբ արխիվային ու մամուլի նյութեր, 150 հայերեն և օտարալեզու քարտեզներ: Այս ամենի մեջ առանձնանում է ռուսական (ցարական) բանակի գլխավոր շտաբի կողմից Ա Աշխարհամարտի նախօրեին հրատարակված Կովկասի 5 վերստանոց (1 վերստը = 1067մ) ռուսերեն քարտեզը, որը գիտական – կատարողական բարձր մակարդակով բացառիկ տեղ է գրավում մնացած բոլոր աղբյուրների մեջ, չնայած որ գերծ չէ որոշակի թերություններից: Հայալեզու աղբյուրներից կարելի է առանձնացնել Ա Աշխարհամարտի սկզբին Թիֆլիսում հրատարակված անգլիացի ճանապարհորդ-ուսումնասիրողներ ու հայագետներ Լինչի և Օսվալդի «Հայաստան և հարևան երկրներ» քարտեզը (խմբագիր՝ Արտաշես Աբեղյան)՝ իր մի շարք արժանիքներով ու թերություններով:

Պատկերացում կազմելու համար ներկայացվող քարտեզի ընդգրկելիության աստիճանի մասին, բերենք մի շարք թվեր: Քարտեզներ 2-17-ում ներկայացված բնակավայրերի ընդհանուր թիվը (առանց «կույր քարտեզներում») – հարակից տարածքներում տեղակայված բնակավայրերի) կազմում է 8833: Ըստ առանձին նահանգների՝ պատկերը հե-

տևյալն է. Կարինի նահանգ-908, Տրապիզոնի նահանգ - 478, Կարսի մարզ-285, Վանի նահանգ-821, Բաղեշի նահանգ-905, Սեբաստիայի նահանգ-1134, Հայկական Կիլիկիա-266, Դիարբեքիի նահանգ-667, Խարբերդի նահանգ-582, Ուրֆայի գավառ-317 և այլն:

Առավել հասկանալի լինելու համար նշենք, որ մի շարք հեղինակավոր հրատարակություններում (Հայկական սովետական հանրագիտարան, հհ.1-12, Եր., 1974-1986 թթ, Հայկական հարց, Եր., 1996, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հհ. 1-5, Եր., 1986-2001թթ), ինչպես նաև Լինչի-Օսվալդի քարտեզում բերված առանձին նահանգների և գավառների բնակավայրերի թիվը մի քանի անգամ զիջում է ներկա հրատարակությանը: Համեմատաբար բավարար ուսումնասիրված և քարտեզագրված են Կարնո և Վանի նահանգները, մասամբ Բաղեշի և Խարբերդի նահանգների առանձին մասեր: Ինչ վերաբերվում է Արևմտյան Հայաստանի ընդհանուր և միասնական քարտեզին, որը բնականաբար բոլորովին այլ որակ է առանձին նահանգների և առանձին գավառ-գավառակների քարտեզների համեմատությամբ, ապա, ցավոք սրտի, մինչև այսօր նման ներկայանալի և դիտարժան որևէ գործ հրապարակի վրա չունենք, էթե չհաշվենք ներկա քարտեզի առաջին հրատարակությունը (Եր., 2003 թ.): Վերևում հիշատակված Կովկասի 5-վերստանոց և Լինչի-Օսվալդի «Հայաստան» քարտեզներից մինչև օրս պահպանվել են չնչին թվով օրինակներ. ընթերցող լայն հասարակությունը և, ինչու չէ, նաև գիտական շրջանների մի զգալի մասն անտեղյակ է դրանց: Այստեղից էլ ներկա հրատարակության հրամայական անհրաժեշտությունը:

Քարտեզի կազմմանը, քարտեզաստեղծմանը վերաբերող գիտական տեխնիկական բնույթի մի շարք կարևոր խնդիրներից առանձնացնենք մեկը: Դա բնակավայրերի անվանումների հարցն է: Շարքային ընթերցողի (և ոչ միայն շարքային) համար այն առավել տեսանելի, առավել հասկանալի, բայց նույնչափ էլ վիճահարույց է: Բանն այն է, որ Արևմտահայաստանի (նաև Արևելահայաստանի) բնակավայրերի մեծամասնության թե՛ հայկական, թե՛ օտար, հիմնականում թուրքական անվանումներից յուրաքանչյուրն ունի 5-7 և ավելի տարբերակներ (օրինակ՝ Շարղշլա-Շարկշլա- Շարգշլա- Շարղըշլա-Շարգըշլա և այլն): Ընդ որում սահմանագիծը միշտ չէ, որ անցնում է արևմտահայերեն-արևելահայերեն, դասական ուղղագրություն-նոր ուղղագրություն, գրական լեզու-բարբառային լեզու ջրբաժաններով: Նույն տեղանվանումը մեկից ավելի տարբերակներով կարող է հանդիպել միայն արևմտահայերենում կամ միայն արևելահայերենում, միայն դասական ուղղագրությամբ կամ միայն նոր ուղղագրությամբ: Նման պայմաններում, բնականաբար «ճիշտ ընտրություն» հասկացությունը կարող է լինել հարաբերական-սուբյեկտիվ: Տվյալ դեպքում ճիշտ ընտրությունը հեղինակի համար տեղանվան տվյալ տարբերակի առավել տարածված լինելու հանգամանքն է... Իսկ ընդհանրապես նախապատվությունը տրվել է արևմտահայ տարբերակներին՝ անթույլատրելի համարելով արևմտահայ բնակավայրերի անվանումը (լինի հայկական թե թուրքական) «կոտրել-ուղղել» և ներկայացնել արևելահայերենով:

Քարտեզում նշված բնակավայրերի մեծամասնությունը գուտ հայաբնակ կամ հայախառն են:

Այժմ երկու խոսք ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ընդգրկած տարածքի վերաբերյալ: Կան հասկացություններ, որոնք որքան դյուրըմբռնելի, նույնքան էլ դժվար սահմանելի են: Տվյալ դեպքում խոսքն ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ վարչատարածքային սահմանման

մասին է: Մա մի հարց է, որի ճշգրիտ պատասխանն ըստ հեղինակի, բացակայում է: Ա Աշխարհամարտի և Հայոց Մեծ եղեռնի նախօրեին ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (ՄԵԾ ՀԱՅՔԻ մեծ մասը և ՓՈՔԸ ՀԱՅՔԸ) զբաղեցնում էր Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան 6 վիլայեթներ (Վանի, Բաղեշի, Կարնո, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքի), որոնց ընդհանուր տարածքը կազմում էր մոտ 250000 կմ²: Նշված տարածքի արևելյան սահմանագիծը խիստ որոշակի է: Դրանք ռուս-թուրքական և պարսկա-թուրքական սահմաններն են: Հյուսիսային սահմանագիծը նույնպես բավական որոշակի է: Դա Տրապիզոնի նահանգի հարավային սահմանն է, որը անցնում է Պոնտական լեռնաշղթայով: Իսկ հարավային և արևմտյան շատ թե քիչ ճշգրիտ սահմանագծի վերաբերյալ լիակատար անորոշություն է տիրում: Արևմտյան Հայաստանին վերաբերող երկու միջազգային իրավական ակտերը՝ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը և 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը (խոսքն այդ երկու պայմանագրերով Արևմտյան Հայաստանի սահմանագծման մասին է), բավարար պատասխան չեն տալիս առաջադրված հարցին, իսկ մնացած բոլոր ուղեցույցները, լինեն դրանք ուսումնասիրություններ, ճանաչված անհատների կարծիքներ կամ պայմանագրերի նախագծեր, էլ ավելի սուբյեկտիվ բնույթի են: Այս ամենին էթե ավելացնենք այն հանգամանքը, որ Կիլիկիան (Ադանայի նահանգ և Հալեպի նահանգի հյուսիսարևմտյան հատված) և Ուրֆայի գավառի (Միջագետք Հայոց) հյուսիսային մասը դարեր ի վեր նույնպես եղել են հայկական տարածքներ, ապա լիովին պարզ կդառնա խնդրո առարկա հարցի բարդությունը: Ելնելով դրանից՝ հեղինակը անպատասխան է թողել ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ արտաքին ճշգրիտ սահմանների վերաբերյալ խիստ վիճահարույց և անչափ պատասխանատու հարցը:

Եվ ամենակարևորի՝ այս քարտեզի բարոյահոգեբանական նշանակության մասին: Հայտնի է, որ քարտեզն իր մեջ պարունակում է գիտական (ինֆորմացիա) տեղեկատվություն և այն ընթերցողին փոխանցելը հեղինակի առաջնային խնդիրն է: Ճիշտ է, Արևմտյան Հայաստանի լիարժեք քարտեզ ունենալը չափազանց կարևոր է, և այդ ուղղությամբ արվել է առավելագույնը, բայց ըստ հեղինակի, դրա հետ միաժամանակ և դրանից առավել կարևորը հետևյալն է. էլ ավելի հատու դարձնել այն զենքը, որից առավել է սարսափում մեր պատմական թշնամին: Խոսքը հայ ժողովրդի պատմական հիշողության և դրանից բխող այն արդարացի-համարժեք հատուցման անհրաժեշտության մասին է, որը երբևիցե լինելու է և երբևիցե աշխարհի ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ կոչվող մասում 1915-ին կանգ առած ժամանակը վերստին շարունակելու է իր բնականոն ընթացքը»,- ավարտում է իր երկու խոսքը ռազմական պատմաբան Ռաֆայել Թադևոսյանը:

Այդ պատճառով և ճիշտ տեղին է, որ առաջին թերթում տպագրված է ՀՀ և ԼՂՀ վարչական քարտեզն ազատագրված տարածքներով, ինչպես նաև ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶՍԱՄԱՐՏ. ՇՈՒՇԻԻ ԱԶՍԱԳՐՈՒՄԸ «ՀԱՐՄԱՆԻՔ ԼԵՌՆԵՐՈՒՄ» ՕՊԵՐԱՅԻԱՆ-1992 թ. մայիսի 8-16, որի վերաբերյալ ՀՀ Կրթության ու գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոն փորձագիտական եզրակացություն են ժամանակին ներկայացրել «Հարսանիք Լեռներում» օպերացիայի պլանը մշակած Արցախի ինքնապաշտպանության ուժերի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր լեգենդար ԿՈ-

ՄԱՆԴՈՍ-ԱՐԿԱԴԻ-ՏԵՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ, շտաբի պետ ՖԵԼԻՔՍ ԳԶՕՂԼՅԱՆԻ, գեներալ-մայոր Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ և ԴՆԵՊՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ստորագրություններով հետևյալը.

«ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԱՍԱՄԱՐՏ. ՇՈՆՇԻԻ ԱԶԱՍԱԳՐՈՒՄԸ և ԼԱԶԻՆԻ միջանցքի բացումը-1992 թ. մայիսի 8-16» քարտեզում (հեղինակ Ռաֆայել Թադևոսյան) բերված փաստերը և նկարագրված իրադարձությունները լիովին համապատասխանում են պատմական իրականությանը: Հեղինակի կողմից կատարված է օպերացիայի համապարփակ, սեղմ և անաչառ վերլուծություն, որն իր հերթին աղբյուրագիտական լայնածավալ աշխատանքի արդյունք է: Քարտեզը կազմված և գծված է մասնագիտական բարձր մակարդակով և ճշգրտորեն համապատասխանում է տեքստին:

Համարակալված քարտեզները հետևյալն են.

«Քարտեզ 1 – Արևմտյան Հայաստանի -1914 Վանի, Բաղեշի, Կարինի, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիի նահանգներ և Հայկական Կիլիկիա»: Ընդհանուր քարտեզի վերնագիրն ամփոփված է վիշապին նիզակահարող հայ հեծյալ զինվորի (Ս. Գևորգ գործարարի կերպարով) հարթաքանդակի միջև: Դրվագը Մշո Ս. Առաքելոց վանքի դռան վերին հատվածից է:

Վիճակագրություն Արևմտյան Հայաստանի 6 նահանգների ազգաբանական: Ըստ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի (1912 թ.), ինչպես նաև Ադանայի նահանգի, Կարսի մարզի և Մուրմալուի գավառի:

Վիճակագրություն հայ քաղաքային բնակչության, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ և Օսմանյան կայսրության, Արևելյան Հայաստան և Անդրկովկաս (1914), Վան քաղաքի հատակագիծը և դրվագներ Վանի Հերոսապատում ժամանակագրությունից IX դ. 2-րդ կես և Բ. մինչև 1918 թ. օգոստոսի 1-ը:

«Քարտեզ 2 – Կարինի նահանգ (վիլայեթ), Արտեզյան Պոնտոս և Կարսի Մարզ», «Քարտեզ 3 – Երզնկայի գավառակ», «Քարտեզ 4 – Կարինի գավառակ», «Քարտեզ 5 – Կարսի մարզի Կարսի օկրուգ», «Քարտեզ 6 – Կարինի (Էրզրումի) նահանգի Բայազետի գավառ և Երևանի նահանգի Մուրմալու գավառ», «Քարտեզ 7 – Վանի և Բաղեշի նահանգներ», «Քարտեզ 8 – Մոկսի և Շատախի գավառներ», «Քարտեզ 9 – Վանի-Տոսպի և Հայոց Ձորի գավառակներ», «Քարտեզ 10 – Սեբաստիայի նահանգ, Տրապիզոնի նահանգ Տրապիզոնի գավառակ (մասամբ), Զանկի գավառ, Անկարայի նահանգի Կեսարիայի գավառ (մասամբ), և Հալեպի նահանգի Մարաշի գավառ», «Քարտեզ 11 – Նիկոմեդիայի գավառ», «Քարտեզ 12 – ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ Ադանայի նահանգ և Հալեպի նահանգի Մարաշի և Այնթափի գավառակներ», «Քարտեզ 13 – Եվդոկիայի գավառակ», «Քարտեզ 14 – Պեյլանի, Սուեթիայի (Մուսա Լեռ) և Քեսապի գավառակներ», «Քարտեզ 15 – Դիարբեքիի, Խարբերդի (Մամուրեթ Ուլ-Ազիզ) նահանգներ և Ուրֆայի գավառ», «Քարտեզ 16 – Ակնի, Արաբկիրի և Չմշկաձագի», «Քարտեզ 17 – Խարբերդի, Բերիի (մասամբ) և Բալուի գավառակներ»:

Այս աշխատանքը ոգեղեն ուժի մի դրսևորում է հայության համար:

Մնում է ի խորոց սրտի ՓԱՌՔ ՏԱԼ ԱՍՏՕՈՒՆ տառապալից նվիրումի կոթողն իր լրումին հասցնելու և աղոթել գործի շարունակության բարեհաջող ընթացքի համար:

